ԻՆԵՍԱ ՍՈՒՐԵՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1994թվականի հուլիսի 18-ին Երևան քաղաքում:

2009թ. ավարտել է Երևանի թիվ 116 միջնակարգ դպրոցը:

2012թ. ավարտել է Երևանի Սերո Խանզադյանի անվան թիվ 184 ավագ դպրոցը:

2012-2016թթ. սովորել է Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան:

2013-2016թթ. սովորել է Ֆրանսիայի Հանրապետության Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով իրավագիտության բակալավրի (լիսանսի) աստիճան:

2017-2019թթ. սովորել է Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով միջազգային գործարար իրավունք մասնագիտացմամբ մագիստրոսի աստիճան:

2017-2019թթ. սովորել է Ֆրանսիայի Հանրապետության Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանում՝ ստանալով միջազգային իրավունք մասնագիտացմամբ մագիստրոսի աստիճան:

2018-2019թթ. հանդիսացել է Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամի ուսանողական խորհրդի անդամ:

01.02.2017-11.06.2017թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական՝ ժամանակավորապես կատարելով դատավորի օգնականի պարտականությունները:

12.06.2017-18.10.2017թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական:

19.10.2017-09-04-2018թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական;

25.04.2018-27.06.2018թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական:

07.03.2019-08.02.2021թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական՝ կցվելով Վճռաբեկ դատարանի նախագահին:

16.02.2021թ.-ից առ այսօր աշխատում է Սահմանադրական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

14.10.2022թ.-ից առ այսօր աշխատում է Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամում (իրավաբանական ֆակուլտետում)՝ որպես «Վարչական դատավարություն» առարկայի դասախոս:

2017 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի թիվ 720-Ա հրամանով ինձ շնորհվել է ՀՀ դատական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

2017 թվականի հոկտեմբերի 18-ին ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի թիվ 746-Ա հրամանով ինձ շնորհվել է ՀՀ դատական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

2019 թվականի դեկտեմբերի 26-ին ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի թիվ 1184-Ա «Դատական ծառայողին խրախուսելու մասին» հրամանով 2019 թվականի ընթացքում կատարված աշխատանքների ամփոփման արդյունքում պարտականությունները և առանձին առաջադրանքներն որակյալ և բարեխիղճ կատարելու համար ինձ շնորհվել է ՀՀ դատական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան:

Տիրապետում է ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն և պարսկերեն լեզուներին: Ամուսնացած չէ:

ՕՔՍԱՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԴԻԼԲԱՆԴՅԱՆ

Ծնվել է 1996 թվականի հունվարի 1-ին Երևան քաղաքում:

2013 թվականին ավարտել է Երևանի թիվ 83 դպրոցը:

2017 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը՝ գերազանցությամբ:

2019 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2020 թվականին ավարտել է Հայաստանի ամերիկյան համալսարանի հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետի իրավագիտության մագիստրատուրան:

2019 թվականից առ այսօր հանդիսանում է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ:

2021 թվականից առ այսօր սովորում է Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցում:

09.02.2018-01.02.2019թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես կրտսեր մասնագետ:

01.02.2019-10.12.2020թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես առաջատար մասնագետ:

10.12.2020 թվականից առ այսօր աշխատում է Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությում՝ որպես գլխավոր մասնագետի պաշտոնակատար:

10.09.2021-01.03.2022թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս:

08.09.2022 թվականից առ այսօր աշխատում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնում՝ դասախոս:

Տիրապետում է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներին:

ԱՆԻ ՄԻՔԱՅԵԼԻ ՔԱՄԱԼՅԱՆ

Ծնվել է 1996 թվականի հոկտեմբերի 30-ին, Արարատի մարզի Բերքանուշ համայնքում:

2013 թվականին ավարտել է Արարատի մարզի Դալար համայնքի միջնակարգ դպրոցը:

2017 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2019 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

10.11.2017-24.10.2018թթ. աշխատել է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար:

24.10.2018 թվականից առ այսօր աշխատում է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած է:

ԼՈՒՍԻՆԵ ԱՐՏԱՇԻ ԲՈՅԱՋՅԱՆ

Ծնվել է 1984թ. սեպտեմբերի 1-ին, Շիրակի մարզի Փանիկ գյուղում:

1991-2001թթ. սովորել է Շիրակի մարզի Փանիկ Գյուղի միջնակարգ դպրոցում:

2005թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2007թ.-ին ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրան:

10.12.2007-06.08.2008թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.11.2010-21.02.2011թթ. աշխատել է «Ալիբի» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

29.01.2013 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (արտոնագրի գործողությունը կասեցված է):

22.02.2011-26.07.2022թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

26.07.2022 թվականից առ այսօր աշխատում է Վճռաբեկ դատարանի վարչական պալատում՝ որպես դատավորի օգնական:

Այրի է, ունի երկու երեխա:

ՆԱՐԻՆԵ ՏԻԳՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ծնվել է 1996 թվականի հոկտեմբերի 27-ին Երևան քաղաքում:

2011 թվականին ավարտել է Երևանի Ն. Վ. Գոգոլի անվան N 35 միջնակարգ դպրոցը:

2014 թվականին ավարտել է Երևանի Բ. Ժամկոչյանի անվան N 119 ավագ դպրոցը:

2018 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2020 թվականին ավարտել է Հայաստանի ամերիկյան համալսարանի հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետի իրավագիտության մագիստրոս ծրագիրը (LL.M Master of Laws):

2020 թվականի դեկտեմբերի 30-ից հանդիսանում է Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ:

2022 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (արտոնագիր N 3177, արտոնագրի գործողությունը կասեցված է):

15.06.2018-05.08.2021թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

05.08.2021 թվականից առ այսօր աշխատում է Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

Ամուսնացած չէ:

ՆԱՐԵԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ծնվել է 01.07.1990 թվականին, Արմավիրի մարզի, գյուղ Քարակերտում:

2006 թվականին ավարտել է Երևան քաղաքի Եղիշե Չարենցի անվան թիվ 67 միջնակարգ դպրոցը:

2011 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2011-2013թթ. պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն է անցել Հայաստանի Հանրապետության զինված ուժերում:

2015 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2015 թվականին ավարտել է ՀՀ փաստաբանական դպրոց հիմնադրամը՝ ստանալով փաստաբանական արտոնագիր:

13.03.2015-10.05.2016թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնականի պարտականությունները ժամանակավորապես կատարող:

10.05.2016-19.02.2018թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

19.02.2018-01.06.2018թթ. աշխատել է Վարչական վերաքննիչ դատարանում՝ որպես դատավորի օգնական:

11.06.2018-10.12.2018թթ. աշխատել է «Ուլպիանոս» փաստաբանական գրասենյակում՝ որպես փաստաբան:

12.10.2019-12.05.2020թթ. աշխատել է «Ուլպիանոս» փաստաբանական գրասենյակում՝ որպես փաստաբան:

15.02.2019-11.10.2019թթ. աշխատել է «Թաքս Լոու» ՍՊԸ-ում՝ որպես փաստաբան:

01.06.2022 թվականից առ այսօր աշխատում է «Բելգլաս» և «Մեգա Թրեյդ» ՍՊԸ-ներում՝ որպես իրավաբան:

06.07.2022 թվականից առ այսօր աշխատում է «Կոտայք» գարեջրի գործարան ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

ՊԵՏՐՈՍ ԱՐՄԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ծնվել է 25.08.1992 թվականին, Երևան քաղաքում:

2009 թվականին ավարտել է Երևան քաղաքի Կոստան Զարյանի անվան թիվ 117 միջնակարգ դպրոցը:

2013 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության բաժնի բակալավրիատը:

2015 թվականին ավարտել է Պետական կառավարման ակադեմիայի հանրային կառավարման բաժնի մագիստրատուրան:

2018 թվականին ավարտել է Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության բաժնի մագիստրատուրան:

2020 թվականին ավարտել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2020 թվականից սկսած հանդիսանում է Պետական կառավարման ակադեմիայի հայցորդ («Հանրային իրավունք» (ԺԲ. 00.02) մասնագիտությամբ):

12.10.2015-02.10.2017թթ. աշխատել է Նախագահի աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսների վարչությունում՝ որպես 2-րդ կարգի մասնագետ:

05.10.2017-05.04.2018թթ. գրանցված է եղել կադրերի կարճաժամկետ ռեզերվում:

21.06.2018-10.08.2018թթ. աշխատել է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչության դատական պրակտիկայի ամփոփման բաժնում՝ որպես կրտսեր մասնագետի պաշտոնակատար, ապա մինչև 01.11.2018 թվականը՝ որպես կրտսեր մասնագետ:

01.11.2018-01.07.2021թթ. աշխատել է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության դատական պրակտիկայի վերլուծության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

01.07.2021-14.10.2021թթ. աշխատել է Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության դատական պրակտիկայի վերլուծության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետի պաշտոնակատար:

2019-2021թթ. իրականացրել է դատական ներկայացուցչություն՝ նշված մարմինների դեմ և մասնակցությամբ քննվող քաղաքացիական և վարչական գործերով:

15.10.2021-22.12.2021թթ. աշխատել է Արդարադատության նախարարության վերահսկողական ծառայությունում՝ որպես փորձագետ:

22.12.2021-14.01.2022թթ. աշխատել է Արդարադատության նախարարության վերահսկողական ծառայությունում՝ որպես առաջին բաժնի պետ, իսկ 14.01.2022 թվականից առ այսօր աշխատում է Արդարադատության նախարարության վերահսկողական վարչությունում՝ որպես առաջին բաժնի պետ:

2020թ.-ից առ այսօր դասավանդում է Գլաձորի համալսարանում «Վարչական իրավունքի արդի հիմնահարցեր» և «Վարչական դատավարություն» առարկաներ:

4 գիտական հոդվածի հեղինակ է:

Ամուսնացած չէ:

ՆԱՐԵ ԱՇՈՏԻ ՏՈՆՈՅԱՆ

Ծնվել է 1991 թվականին Ուկրաինայի Հանրապետության Լուգանսկ քաղաքում:

2007թ. ավարտել է Վանաձոր քաղաքի Հ. Թումանյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոցը:

2007-2011թթ. սովորել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական (այս պահին՝ լեզվահասարակագիտական) համալսարանի օտար լեզուների ֆակուլտետում՝ ստանալով անգլերեն լեզվի և գրականության բակալավրի որակավորման աստիճան:

2011-2013թթ. սովորել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական (այս պահին՝ լեզվահասարակագիտական) համալսարանի «UNESCO»-ի ամբիոնի հանրային կառավարման մագիստրատուրայում՝ ստանալով հանրային կառավարման մագիստրոսի որակավորման աստիճան:

2014-2017թթ. սովորել է Երևանի Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան:

2019-2021թթ. սովորել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան:

18.12.2014-01.03.2016թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

01.03.2016-09.11.2018թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի գործավար:

09.11.2018 թվականից մինչ օրս աշխատում է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

ՍՈՆԱ ԱՐՄԵՆԱԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1992 թվականի ապրիլի 27-ին, Երևան քաղաքում:

2009 թվականին ավարտել է Երևանի թիվ 102 միջնակարգ դպրոցը:

2013 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2015 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

16.01.2014-28.09.2016թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

08.11.2016-06.02.2017թթ. աշխատել է Վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի գործավար:

07.02.2017 թվականից առ այսօր աշխատում է Փաստաբանների պալատում՝ որպես իրավական հարցերով փորձագետ:

25.11.2017 թվականից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՄՎԵԼԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1990 թվականի հունվարի 5-ին, Երևան քաղաքում:

2006թվականին ավարտել է Երևանի թիվ 22 միջնակարգ դպրոցը:

2010 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2012 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2019 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարան իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրան:

12.01.2009-04.02.2013թթ. աշխատել է «Հմայք-4» ԱԿ-ում՝ որպես իրավախորհրդատու:

01.12.2009-22.11.2010թթ. աշխատել է «Քարե Ամրոց» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

22.11.2010-29.03.2013թթ. աշխատել է «Ար Սի Էֆ Հոլդինգ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան-վերլուծաբան (30.07.2012թ. անվանափոխվել է «Գրանդ Ռիմոն» ՍՊԸ):

01.08.2011-26.07.2013թթ. աշխատել է «Ինլոբբի» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

01.04.2013-26.07.2013թթ. աշխատել է «Քարե Ամրոց» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

26.07.2013-13.11.2013թթ. աշխատել է Ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության դատարաններում պետության գույքային շահերի պաշտպանության և գանձումների սպասարկման բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

28.10.2013 թվականին շնորհվել է Քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

13.11.2013-06.06.2014թթ. աշխատել է Ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական գործերով պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

06.06.2014-17.05.2016թթ. աշխատել է Ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության քաղաքացիական և վարչական գործերով պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես առաջատար մասնագետ:

17.05.2016-09.06.2017թթ. աշխատել է Ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

17.05.2016 թվականին շնորհվել է Քաղաքացիական ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

09.06.2017-30.09.2019թթ. աշխատել է Ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական գործերով պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես բաժնի պետ:

09.06.2017 թվականին շնորհվել է Քաղաքացիական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

30.09.2019 թվականից առ այսօր աշխատում է Ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես բաժնի պետ:

2018 թվականի սեպտեմբերից մինչև 2019 թվականի ապրիլ հանդիսանում է ՀՊՏՀ ֆինանսնատնտեսագիտական քոլեջի դասախոս:

01.09.2019 թվականից առ այսօր հանդիսանում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս:

2012 թվականից առ այսօր հանդիսանում է փաստաբաների պալատի անդամ, փաստաբան (արտոնագրի գործողությունը կասեցված է):

ՀԱՅՐԱՊԵՏ ՀՐԱՉՅԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 31.08.1992թ.-ին, Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում:

1999-2008թթ. սովորել է Արմավիրի մարզի Գայ գյուղի միջնակարգ դպրոցում, 2008թ.-ին տեղափոխվել և 2009թ.-ին ավարտել է Արարատի մարզի Նոր Կյուրին գյուղի միջնակարգ դպրոցը:

2009-2015թթ. սովորել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում («իրավագիտություն» մանկավարժություն մասնագիտությամբ):

2010-2012թթ. անցել է պարտադիր զինվորական ծառայություն ՀՀ զինված ուժերում:

2015-2017թթ. սովորել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում:

2019թ.-ից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ (փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցված է):

2019-2021թթ. սովորել է «Գալիք» համալսարանի բակալավրիատում (իրավագիտություն մասնագիտությամբ):

Մանակցել է 2015թ. սահմանադրական փոփոխությունների հանրային իրազեկման կենտրոնի աշխատանքներին:

2020-2021թթ. հանդիսացել է «Իրավունքի Պաշտպան Միավորում» ՀԿ-ին առընթեր Արբիտրների Բարձրագույն Դպրոցի ունկնդիր:

28.09.2016թ.-ից առ այսօր աշխատում է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած չէ:

ՏԻԳՐԱՆ ՌՈՒԴԻԿԻ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1987 թվականի հուլիսի 20-ին, Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում:

2004 թվականին ավարտել է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

2008 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերություններ ֆակուլտետի բակալավրիատը:

2011 թվականին ավարտել է Պետական կառավարման ակադեմիայի հանրային կառավարման ֆակուլտետի մագիստրատուրան:

2014 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2020 թվականին ավարտել է Երևանի «Հայբուսակ» համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2008-2011թթ. աշխատել է «ՆԵԱԵՎՍ» ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն:

2008-2011թթ. զբաղվել է հասարակական գործունեությամբ. Տավուշի մարզում համակարգել է «ՀԱՆՈՒՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՏԵՎՄԱՆ» հասարակական շարժման գործունեությունը:

01.04.2010-01.09.2010թթ. աշխատել է «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի Տավուշի ԳԳՄ Դիլիջանի ՏՏ-ում՝ որպես ՎՎԾ փականագործ:

10.12.2012-23.07.2014թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես գործավար:

02.12.2013 թվականին շնորհվել է Դատական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

23.07.2014 թվականին շնորհվել է Դատական ծառայողի 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

23.07.2014-19.02.2018թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

19.02.2018 թվականից առ այսօր աշխատում է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

ԺԻՐԱՅՐ ԱՐԹՈՒՐԻ ԽԱՌԱՏՅԱՆ

Ծնվել է 1989 թվականի հունիսի 19-ին Լոռու մարզի Կիրովական քաղաքում:

2006թ. ավարտել է Մայակովսկու անվան թիվ 7 միջնակարգ դպրոցը:

2006-2012թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության ֆակուլտետում՝ ստանալով բակալավրի աստիճան:

2008-2010թթ. անցել է պարտադիր զինվորական ծառայություն Զինված ուժերում՝ ստանալով ավագ սերժանտի կոչում:

2012-2015թթ. սովորել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան:

2017-2019թթ. սովորել է «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի իրավագիտությա ֆակուլտետում՝ ստանալով բակալավրի աստիճան:

23.04.2013-13.04.2015թթ. աշխատել է «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ում՝ որպես գույքային պահանջների կարգավորման բաժնի մասնագետ:

26.10.2015-15.08-2018թթ. աշխատել է Վերաքննիչ վարչական դատարանի աշխատակազմում՝ որպես իրավական փորձաքննությունների ծառայության կրտսեր մասնագետ:

24.08.2018-01.12.2020թթ. աշխատել է ՀՀ պետական վերահսկողական ծառայությունում՝ որպես իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ:

01.12.2020-04.10.2021թթ. աշխատել է ՀՀ պետական վերահսկողական ծառայությունում՝ որպես գլխավոր քարտուղարի տեղակալ:

04.10.2021-20.12.2021թթ. աշխատել է ՀՀ պետական վերահսկողական ծառայությունում՝ որպես ծառայության ղեկավարի տեղակալ:

21.03.2022-24.08.2022թթ. աշխատել է Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կրթության, առողջապահության և աշխատանքի ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող:

24.08.2022թ.-ից առ այսօր աշխատում է Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կրթության, առողջապահության և աշխատանքի ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ:

Հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան: Արտոնագրի գործողությունը հանրային ծառայության անցնելու հիմքով կասեցված է:

Ունի ՀՀ դատական ծառայության առաջին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան:

Ամուսնացած է: Ունի մեկ դուստր:

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԱՐՄԵՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ծնվել է 1996թ. հունիսի 6-ին, Երևան քաղաքում:

2013 թվականին ավարտել է Կարեն Դեմիրճյանի անվան թիվ 139 դպրոցը:

2017 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2019թ.-ին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան:

14.10.2020 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրա՝ որպես հայցորդ:

28.12.2017-10.09.2018թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության օրենսդրության բաժնում՝ որպես փորձագետ:

03.12.2018-04.03.2021թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային գործ և մտավոր սեփականության պաշտպանության ընթացակարգի բաժնում՝ որպես մաքսային տեսուչ-իրավաբան:

04.03.2021-04.03.2022թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ վարույթների իրականացման բաժնում՝ որպես ավագ մաքսային տեսուչ-իրավաբան:

18.02.2022 թվականի թիվ ԲԴԽ-21-Ո-33 որոշմամբ ընդգրկվել է դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում և սովորել է Արդարադատության ակադեմիայում:

18.04.2022 թվականին ավարտել է ուսումը Արդարադատության ակադեմիայում:

25.04.2022-04.08.2022թթ. ընդգրկվել է դատավորների թեկնածուների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժնում:

13.04.2022 թվականից առ այսօր աշխատում է «ՎԵՆԵՐԻ ԻՄՄՕ» ՍՊԸ-ում՝ որպես իրավական խորհրդատու:

Ամուսնացած չէ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ծնվել է 1990թ. հոկտեմբերի 28-ին, Շիրակի մարզի Գյումրի քաղաքում:

1997-2006թթ. սովորել է Շիրակի մարզի Գյումրի քաղաքի թիվ 7 հիմնական դպրոցը:

2006-2007թթ. սովորել է Երևանի Վահան Զատիկյանի անվան թիվ 90 հիմնական դպրոցը:

2011 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2021 թվականին ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի մագիստրարտուրան:

01.09.2011-20.12.2012թթ. աշխատել է «Վաղարշ և որդիներ» ՍՊԸ-ում՝ որպես փոխտնօրեն-իրավաբանական վարչության պետ:

20.12.2012-29.06.2015թթ. աշխատել է «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն:

29.06.2015-21.08.2017թթ. աշխատել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության իրավաբանական հաշվետվությունների բաժնում՝ որպես պետ-ընդերքի հանրապետական ավագ պետական տեսուչ:

11.09.2017-04.12.2018թթ. աշխատել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժնում՝ որպես պետ:

25.12.2018 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ պետական վերահսկողական ծառայություն տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչությունում՝ որպես գլխավոր վերահսկող:

2015 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ՝ փաստաբան:

ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 18.01.2016 թվականի թիվ 05-Ա/2 հրամանով շնորհվել է քաղաքացիական ծառայության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի կողմից 23.12.2017 թվականին պարգևատրվել է պատվոգրով:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության գլխավոր քարտուղարի կողմից 21.09.2022 թվականին պարգևատրվել է պատվոգրով:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:

ՏԱԹԵՎԻԿ ՍՄԲԱՏԻ ԱՅՎԱԶՅԱՆ

Ծնվել է 1987 թվականի հունիսի 26-ին, Երևան քաղաքում:

2002 թվականին ավարտել է Երևանի Ն. Աղբալյանի անվան թիվ 19 միջնակարգ դպրոցը:

2003 թվականին ավարտել է Երևանի «Մթնշաղ» ավագ դպրոց-վարժարանը:

2007 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2009 թվականին ավարտել է ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

16.05.2012-25.07.2013թթ. աշխատել է Վարչական դատարանի աշխատակազմում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

25.07.2013-10.08.2015թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

10.07.2015 թվականին շնորհվել է դատական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

07.08.2015-30.01.2016թթ. աշխատել է Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունում՝ որպես իրավաբանական խմբի իրավախորհրդատու:

13.06.2016 թվականից առ այսօր աշխատում է «Երևանի Գեղարվեստական Ժամացույցների Գործարան» ԲԲԸ-ում՝ որպես իրավաբան:

2016 թվականից հանդիսանում է փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

Ամուսնացած չէ:

ԷԴԳԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

Ծնվել է 02.09.1987թ.-ին, Երևան քաղաքում:

2004թ.-ին ավարտել է Երևան քաղաքի Շավարշ Սիմոնյանի անվան թիվ 112 միջնակարգ դպրոցը:

2004-2008թթ. սովորել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետի բակալավրիատում, իսկ 2006-2008թթ. նույն բարձրագույն ուսումնական հաստատությունում ստացել է լրացուցիչ կրթություն իրավունքի հիմունքներ մասնագիտությամբ:

2008-2010թթ. սովորել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետի մագիստրատուրայում:

2011-2014թթ. սովորել է Կրթության և գիտության նախարարության Գավառի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում:

2014-2016թթ. սովորել է ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում:

14.09.2011-29.01.2014թթ. աշխատել է Վարչական վերաքննիչ դատարանի աշխատակազմի գրասենյակում՝ որպես գործավար:

18.02.2014-01.07.2014թթ. աշխատել է Վարչական վերաքննիչ դատարանում՝ որպես դատավորի գործավար:

01.07.2014թ.-ից առ այսօր աշխատել է Վարչական վերաքննիչ դատարանի դատավորում՝ որպես դատավորի օգնական:

2017թ.-ին, որպես խրախուսանք, շնորհվել է զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր՝ ՀՀ դատական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

Ամուսնացած չէ:

ԱՆՈՒՇ ՌՈԲԵՐՏԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ծնվել է 1990թ. սեպտեմբերի 1-ին Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուր գյուղում:

2005 թվականին ավարտել է Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուր գյուղի Լևոն Ադամյանի անվան միջնակարգ դպրոցը:

2007 թվականին ավարտել է Տավուշի մարզի բերդ քաղաքի վարժարանը:

2011 թվականին ավարտել է Երևանի Մ. Մաշտոցի անվան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2013 թվականին ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

19.02.2013-09.12.2013թթ. աշխատել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

06.02.2014-08.01.20166թթ. աշխատել է ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

08.01-2016-01.11.2018թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչության Դատական վիճակագրության վարման և ամփոփման բաժնում՝ որպես մասնագետ:

01.11.2018-25.09.2020թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության Մշտադիտարկման և դատական վիճակագրության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

25.09.2020-03.05.2021թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության Մշտադիտարկման և

դատական վիճակագրության բաժնում՝ որպես բաժնի պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող:

03.05.2021 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

18.11.2013 թվականին շնորհվել է դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

28.12.2017 թվականին ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից հայտարարվել է Շնորհակալություն:

Ամուսնացած չէ:

ԼՈՒՍԻՆԵ ՄԻՇԱՅԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Ծնվել է 1984 թվականի հունվարի 6-ին, Երևան քաղաքում:

2001 թվականին ավարտել է Ղազարոս Աղայանի անվան թիվ 63 դպրոցը:

2007 թվականին գերազանցությամբ ավարտել է Երևանի Մենեջմենթի համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ դիպլոմավորված:

01.11.2008-01.06.2010թթ. աշխատել է «Սոֆադ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

15.11.2010-28.12.2012թթ. աշխատել է «Վիկտորիա Սթար» ՍՊԸ-ում՝ (անվանափոխված «Մուներիս» ՍՊԸ)՝ որպես իրավաբան:

15.10.2011 թվականից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

2013-2014թթ. հանդիսացել է «ՄԲՄ Լեգիս» փաստաբանական գրասենյակի համահիմնադիր:

04.06.2015-30.04.2016թթ. աշխատել է «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունում՝ որպես իրավախորհրդատու-փաստաբան:

2016 թվականին ԵԱՀԿ և ՀՀ փաստաբանների պալատի համատեղ ծրագրում հանդիսացել է փորձագետ:

09.01.2017-02.05.2017թթ. աշխատել է «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպությունում՝ որպես իրավաբան:

02.03.2017 թվականից առ այսօր որպես անհատ ձեռնարկատեր իրավական կարգավիճակով զբաղվում է փաստաբանական գործունեությամբ:

Մասնակցել է Եվրոպական միության, Եվրոպայի խորհրդի, «Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն» հայաստանյան ներկայացուցչության, ԵԱՀԿ-ի, IRZ-ի՝ Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի, GIZ–ի՝ «Գերմանական միջազգային համագործակցություն» ընկերության, ՄԱԿ ՓԳՀ–ի և այլ միջազգային, ինչպես նաև ազգային կառույցների և կազմակերպությունների կողմից կազմակերպված տարբեր թեմաներով միջոցառումներին, սեմինարներին, վերապատրաստումներին, քննարկումներին, կոնֆերանսներին:

2014թ.-ին Գերմանիայի իրավական համակարգի ծանոթացման աշխատանքային այցելություն է ունեցել Բեռլին, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն:

2016թ.-ի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին մասնակցել է Փարիզի փաստաբանների միության կողմից կրթական «Միջազգային ստաժ» ծրագրին, Փարիզ, Ֆրանսիա, որից հոկտեմբեր- նոյեմբերին՝ ուսուցում Փարիզի փաստաբանական դպրոցում, նոյեմբեր-դեկտեմբերին՝ անցել է պրակտիկա «Willkie Farr & Gallagher» LLP ընկերությունում:

Ամուսնացած չէ:

ՆԱՐԻՆԵ ՄԻՍԱԿԻ ՄԱՆԱՍՅԱՆ

Ծնվել է 02.12.1982թ.-ին, Վրաստանի Հանրապետության Ախալքալաքի շրջանի Խանդո գյուղում:

2000թ.-ին գերազանցությամբ ավարտել է Կոտայքի մարզի Առինջ գյուղի միջնակարգ դպրոցը:

2001-2005թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում:

2005-2007թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում:

2016թ.-ից հանդիսանում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ:

02.06.2008-22.02.2010թթ. աշխատել է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

22.02.2010-21.03.2012թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի կազմակերպահիրավական վարչությունում՝ որպես ավագ մասնագետ:

21.03.2012-03.05.2013թթ. աշխատել է Վարչական վերաքննիչ դատարանում՝ որպես դատավորի օգնական:

03.05.2013-19.02.2019թթ. աշխատել է Վարչական վերաքննիչ դատարանում՝ որպես դատարանի նախագահի խորհրդական:

19.02.2019թ.-ից առ այսօր աշխատում է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես իրավական փորձաքննությունների ծառայության պետ:

Հանդիսանում է մի քանի հոդվածների հեղինակ, համահեղինակ է «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների» գրքի, մասնակցել է Վճռաբեկ դատարանի դատական ակտերի ժողովածուի կազմմանը:

2012թ.-ից հանդիսանում է Փաստաբանական դպրոց հիմնադրամի դասախոս, միաժամանակ անցկացնում է վերապատրաստումներ Փաստաբանների պալատում, Արդարադատության ակադեմիայում, ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոնում:

2013թ.-ից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ:

Ամուսնացած է, ունեմ մեկ դուստր:

ՎԱՀԵ ՄԱՅԻՍԻ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Ծնվել է 17.02.1985թ. Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղում:

2001թ. ավարտել է Իջևանի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

2008թ. ավարտել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետը՝ ստացել պատմություն (իրավունքի հիմունքներ) մանկավարժության բակալավրի աստիճան:

2003-2005թթ. ծառայել է ԼՂՀ ՊԲ Մատաղիսի զորամասում, մասնակցել մարտական հերթապահության:

2008-2010թթ. սովորել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետում և ստացել մագիստրոսի աստիճան:

2020 թվականին ավարտել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ ստանալով բակալավրի աստիճան:

01.01.2012-26.11.2012թթ. աշխատել է Վերաքննիչ վարչական դատարանի աշխատակազմում՝ որպես իրավական փորձաքննությունների ծառայության կրտսեր մասնագետ:

30.11.2012 թվականից առ այսօր աշխատում է Վերաքննիչ վարչական դատարանի դատավորի օգնական:

Ունի ՀՀ դատական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

30.05.2019-08.06.2020թթ. Վերաքննիչ վարչական դատարանի կողմից գործուղվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, անցել սեմինար-դասընթացներ Շփայերի Կառավարման գիտությունների գերմանական համալսարանում, մասնակցել «Վաչական գործընթացը Հայաստանում և Գերմանիայում համեմատության մեջ» գերմանահայկական կոլոկվիումին, ինչպես նաև ներկա է գտնվել դատական նիստերի Կարլսրուեի վարչական դատարանում և Գերմանիայի դաշնային վարչական դատարանում (Լայպցիգ):

Հեղինակ է հետևյալ գիտական հոդվածների՝ «Քաղաքացիական ծառայողների իրավական պատասխանատվության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր: Երևան: «Անտարես» հրատ., N5/166 2013թ. մայիս, էջ 22-32, «ՀՀ քաղաքացիական ծառայության կառավարման իրավական կարգավորման հիմնախնդիրները», «Արդարադատություն» գիտական հանդես: N3(22), 2013թ. սեպտեմբեր, էջ 26-32, «ՀՀ քաղաքացիական ծառայության կազմակերպման սկզբունքները, «Вестник» РАУ: N2/2013, 2013թ. էջ 72-81,. «Քաղաքացիական ծառայութունը ՀՀ պետական կառավարման համակարգում», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր: Երևան: «Անտարես» հրատ., N10-11/172-173 2013թ. հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 18-29:

Տիրապետում է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներին:

Ունի մեկ դուստր:

ՀԱՍՄԻԿ ԱՐԱՅԻԿԻ ՋԱՄԱԼՅԱՆ

Ծնվել է 14.03.1988թ.-ին, Արտաշատ քաղաքում:

1995-2004թթ. սովորել է Հովհաննես Թումանյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

2004-2005թթ. սովորել է թիվ 6 միջնակարգ դպրոցում:

2006-2010թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով բակալավրի աստճան:

2010-2013թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով մագիստրոսի աստճան:

01.02.2011-12.04.2018թթ. աշխատել է Վարչական դատարանի Վեդու նստավայրում՝ որպես դատավորի օգնական:

05.10.2018թ.-ից առ այսօր աշխատում է Վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Տիրապետում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներին:

2014թ.-ից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

ԱՐԱՄ ԱՐԹՈՒՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Ծնվել է 19.02.1993թ.-ին, Երևան քաղաքում:

1999-2009թթ. ստացել է միջնակարգ կրթություն Մոնթե Մելքոնյանի անվան Երևանի թիվ 11 դպրոցում, Գարեգին Նժդեհի անվան Երևանի թիվ 161 դպրոցում, այնուհետև՝ Համո Սահյանի անվան Երևանի թիվ 86 դպրոցում:

2013թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի բակալավրիատը:

2016թ.-ին ավարտել է Հյուսիսային համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2021թ.-ին ավարտել է Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

17.02.2014-03.10.2018թթ. աշխատել է Վարչական դատարանում, որպես դատավորի գործավար:

03.10.2018թ.-ից մինչ օրս աշխատում է Վարչական դատարանում, որպես դատավորի օգնական:

Ամուսնացած չէ:

ԱՆԻ ՍԱՐՄԵՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ծնվել է 31.07.1990թ.-ին Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքում:

1997-2007թթ. սովորել է Վաղարշապատի Վ. Ռշտունու անվան թիվ 11 միջնակարգ դպրոցում:

2007-2011թթ. գերազանցությամբ սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատում, իսկ 2011-2013թթ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրայում:

2013-2017թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրայում:

Հանդիսանում է իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ:

Թեկնածուական ատենախոսության թեման է «Ընդդատության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում», մասնագիտությունը՝ ԺԲ.00.04:

04.06.2012-08.01.2013թթ. և 11.02.2013-14.11.2013թթ. աշխատել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնում՝ որպես փորձագետ:

08.01.2014-09.06.2014թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչությունում՝ որպես փորձագետ:

18.06.2014-10.06.2016թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության քաղաքացիական և վարչական գործերով պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես իրավախորհրդատու:

10.06.2016-22.08.2019թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետական շահերի պաշտպանության բաժնի, այնուհետև՝ վարչական գործերով պետական շահերի պաշտպանության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

22.08.2019-17.09.2019թթ. աշխատել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի իրավաբանական վարչության իրավական ակտերի բաժնի պետ-վարչության պետի տեղակալ:

18.09.2019-15.04.2022թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչությունում՝ որպես պետի տեղակալ:

15.04.2022-05.09.2022թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ:

05.09.2022թ.-ից առ այսօր հանդիսանում է «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի ավագ իրավաբան-փորձագետ, թիմի ղեկավար՝ քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխումների մասով:

2015թ. սեպտեմբերից առ 2017թ. հունիս աշխատել է «Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա» հիմնադրամի իրավագիտության ամբիոնում՝ որպես դասախոս:

2018թ. հոկտեմբերից առ այսօր աշխատում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնում՝ որպես դասախոս, ասիստենտ:

2021թ. նոյեմբեր և 2022թ. մայիս ամիսներին հանդիսացել է դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության աշխատանքների ստուգման և գնահատման հանձնաժողովի անդամ:

2021թ.-ից առ այսօր հանդիսանում է «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ, գնահատման և բողոքարկման հանձնաժողովների անդամ:

2022թ. սեպտեմբերից հանդիսանում է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի դասախոս:

Ամուսնացած է, ունի մեկ երեխա:

Վերջին տարիների հիմնական հրապարակումներն են.

1) Միքայելյան Ա. «Քաղաքացիական գործերով ընդդատության ինստիտուտի իրավական բնույթը և էության հիմնահարցերը», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ԵՊՀ,

իրավագիտության ֆակուլտետ: Խմբագիր՝ Գ. Ս. Ղազինյան. Եր.: ԵՊՀ հրատ., 2016, էջեր 366-384:

2) Միքայելյան Ա. «Ընդդատության կանոնների խախտմամբ քաղաքացիական գործի քննության և լուծման իրավական հետևանքները», Պետություն և իրավունք, թիվ 3 (73) 2016թ., էջեր 91-102:

3) Միքայելյան Ա. «Պայմանագրային ընդդատությունը քաղաքացիական դատավարությունում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբագիր՝ Գ. Ս. Ղազինյան. Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջեր 457-479:

4) Միքայելյան Ա. «Բացառիկ ընդդատությունը քաղաքացիական դատավարությունում», Պետություն և իրավունք, թիվ 3-4 (81-82) Երևան 2018, էջեր 63-75:

5) Միքայելյան Ա. «Ընդդատության կանոնների խախտման հետևանքները քաղաքացիական գործի հարուցման փուլում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու 2(2)2018/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբագիր՝ Գ. Ս. Ղազինյան. Եր.: ԵՊՀ հրատ., 2019, էջեր 354-369:

6) Միքայելյան Ա. «Միմյանց հետ կապված գործերի ընդդատությունը որպես տարածքային ընդդատության ինքնուրույն տեսակ», Օրինականություն, Եր., 2020, N 118, էջեր 57-66:

7) Միքայելյան Ա. «Ինտերնետ վեճերով գործերի ենթակայության առանձնահատկությունները», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու 1(3)2019/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբագիր՝ Գ. Ս. Ղազինյան. Եր.: ԵՊՀ հրատ., 2020, էջեր 221-245:

8) Միքայելան Ա. «Ընդդատության կանոնների խախտման դատավարական հետևանքները հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում», Արդարադատություն, Երևան, 2021, N 1 (53), էջեր 77-85: